

Նաւոր հալ ուսումնարաններում՝ 400 տղալ և 150 աղջիկ։  
Հալ՝ կաթողիկ և հալ—բողոք. ուսումնարաններում՝ 270 տղալ  
և 191 աղջիկ։ Եւ օտար ուսումնարաններում՝ 208 տղալ և  
290 աղջ։

Ուրեմն կ. Պալսում ներկալումս ուսանում են հակերից  
7199 տղալ և աղջիկ։

Որքան էլ չորրուցամաք են այս տեղիկութիւնները մեզ՝  
հեռաբնակ հալերիս համար, այնուամենանիւ ցանկալի էր, որ  
Պատրիարքարանը նման վիճակադիր կազմէր նաև զաւանե.  
րի հալ գպրոցների և մանաւանդ ժողովրդի արդի թուի և կա-  
ցութեան մասին։

### ՃՈՒՇՈՒՄՑ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՑԻ ԴԱՏԸ

Լրագիրներից լալտնի է ընթերցողներին, որ Շուշուաբ-  
հալոց կոնսիստօրիան իւր անդամներով և նորա նախկին նա-  
խանդամ Գարեգին վարդապետ (այժմ եպիսկոպոս) Սաթու-  
նեանով զատի էր ենթարկուած՝ Խանքենդի Պետրոս քահա-  
նալ Տէր Յովհաննիսեանի գրաւոր մնացրանքների հիման  
վերաբ. Տ. հալը բողոքում է, որ Գեր. Սաթունեանը տուղա-  
նել է մի քահանակի 25 ռուբլով՝ ուստի բերեն լեզուով խնդիր-  
տալու հասար և գիտութեամբ կեղծել է Գր. Յարութիւնեանի  
որդու ծննդականը։

Դատը նշանակուած էր տարւուս մարտի 8-ին Շուշուում  
և մանրամասնաբար նկարագրել է «Նոր-Դար ում Պատրիկը,  
որ քաղուածօրէն առաջ ենք բերում ապստեղ».

«Մարտի 4-ին քաղաքս ժամանեց Տ. Գարեգին եպիս.  
Սաթունեանը. այն լուրը, թէ հալ եպիսկոպոս, այն էլ իրենց  
վաղեմի սիրելի առաջնորդն իրը մեղադրեալ դատարան պի-  
տի տարուի, շարժել էր ամենքի սիրուց, զնցնել ամենքին ։ Յ  
օր շարունակ քաղաքս ցիք անընդհատ հոսանքով զալիս տես-  
նում էին ակամալ հիւրին։ Մարտի 8 ին կառքը դատաստա-  
նատուն էր տանում Սաթունեան սրբազնին, որին ուղեկ-  
ցում էր ա. Բենիկ վարդապետը, ճանապարհին կանքնած ժո-  
ղովրդի վերալ կարծես փոշի էին մազել, ապշութեան փոշի։  
Սրբ. մեղադրեալին ընդունեց իւր բնակարանում պ. Ն Ամբ-  
րումեան, որի տանն է և ատեանը. ժողովրդի հոսանքը դահ.  
լիճն է խուժում. ոստիկաններն անդօր են առաջն առնել.  
սրբազնը նստում է լատուկ բաղկաթոուի վերալ, որի առաջ  
գորգ էր ձգած պ. նախազանի կարդագրութեամբ. կողքին  
նստում է իւր հեակեորդ Բենիկ վարդապետը և ալլ մնաց-  
րեալներ։ Կոնոխստորին և սրբազնին պաշտպանում էր պ.  
Կրասովսկին, իսկ միւսներին պ. Ստալինսկին։ Նախազան պ.  
Դաւիդովը նիստը բաց է անում. Դատախալը կարգում է մե-

զաղրական ճառը, որից երևում է, որ տ. Պետրոսի մեղադրանքները հաստատել են կոնսիստորի ծառալորներ Մ. Տ. Սարգսեան և Յ. Մելիք Շահնազարեան։ Ատենադպիրը կարգում է ամբողջ գործը՝ կրասովսկին դատարանին ներկաւացնում է երկու փաստաթղթեր, թէ ո. Պետրոսը ատելութիւնից դրդուած է բողոք տուել։ Ատեան է հրավրում Տ. Պետրոս քահանան, և նախագահի հարցին՝ թէ ինչ գիտէ ալդ զեղծումների մասին։ Նա պատմում է մանրամասնաբար, որ երբ ինքը ծխական դպրոցների տեսուչ էր՝ սրբազնը հալածում էր իրան, կոնսիստորի աստիճանաւորներ Միրզա Տ. Սարգսեան և Յովսէփ Շահնազարեան ալդ թղթերը ծածուկ ցուց են տուել իրան և համոզել, որ եթէ Սաթսւնեանցը հեռացուի՝ իւր՝ Տ. Պետրոսի քաղաք տեղափոխուելը հնարաւոր կիմի, և նորան հեռացնելու միջոցներ են ցուց տալիս՝ Յարութիւնեանցին տուած ծննդականի որպէս թէ կեղծ լինելը և Սարովի քահանալին սրբազնի տուրանելը ռուսերէն ինչդիր գրելու համար և առաջարկում են նորան ալս մասին բողոքել սինօդին, որպէս զի Սաթունեանին հեռացնեն և Տ. Պետրոսը բողոքում է։ «Ո» աթունեանը զնաց էջմիածին, ևս սարսափեցի մի վարկեան, ասում է Պետրոս քահանան իւր ցուցման մէջ, մտածելով որ Սաթունեանը կիմանալ իմ գրած բողոքի մասին և դաս կլինի. Բնչ պիտի պատասխան տամ, քանի որ փաստեր չունիմ, իսկոյն զիմնեցի լիշեալ աստիճանաւորներին և խնդրեցի որ փաստեր տան ինձ... նրանք ծիծաղեցին ինձ վերալ միալն և ես հասկացալ, որ նրանք Սաթունեանին հակառակ լինելով մտածել են հեռացնել տան և... ինձ դործիք են դարձրել. Երբ իմ աչքերս բացուեցին, տեսաւ թէ ինչպիսի մարդկանց հետ զործ ունիմ, տեսաւ թէ «մատնեցի զարիւն արդար». Դիմեցի սինօդին և լեսս կոչեցի իմ գրածները, սակալն... օրէնքն ընթացք տուեց իմ թղթին և դործն ալստեղ հասաւ։ Ակնունետև ցուցումն տուեց Միրզա Տ. Սարգսեանը, գրեթէ նունը ինչ որ խօսել էր Տ. Պետրոսը, աւելցնելով, թէ «ալն, ալդ մեղադրանքները մենք սարքել ենք Սաթունեանի վ'րալ, որովհետեւ կարծում էինք թէ մեզ թշնամի էս։ Կոնսիստորիալի դործապահ Թէոս Տ. Յովհաննիսիանը իւր ցուցմունքների մէջ մեղադրում է ատենադպիր Մ. Տ. Սարգսեանին և գանձապահին։ Ակնունետև հարցում են զանազան վկաներ. արտասանուում է մեղադրական ճառը. պաշտպանողական ճառեր են արտասանում փաստարանները, և դատարանը, ի նկատի ունենալով բոլոր հանդամանքները՝ արդարացնում է թէ սրբազնին և թէ բալոր մեղադրեալը ներին։ Ժողովրդի ոգեսրութեանը չափ չէ լինում ալլ ևս։